

PEARLS OF ARMENIAN HERITAGE

Անառակ Որդիին Կիրակի | 2024, Փետրուար 25



Յովհանն Որոտնեցի եւ Գրիգոր Տաթեւացի, 18րդ դար, Մատենադարանի Թի. 3295 ձեռագիրէն, էջ 9բ

Հայ Եկեղեցւոյ Ճաշոցը Բառասնորդաց Մեծ Պատրիարքի Կիրակին Սուրբ Պատարագին Աւետարանը ընթեռնուլ կը սահմանէ Ղուկասի Աւետարանէն 15-րդ գլուխը: Աւետարանիչը երեք առակներ կը պատմէ, եւ Մեծ Պատրիարքի Կիրակին իր անունը ստացած է երրորդ առակէն՝ "Անառակ Որդիին Կիրակի:"

Երեք առակներն ալ կը սորվեցնեն կորսուածը գտնելու, վերականգնելու մասին - առաջին առակը կորսուած ոչխարին առակն է, երկրորդը՝ կորսուած դրամին, իսկ երրորդը՝ Անառակ որդիին առակն է: Երեք առակներն ալ կը նշեն այն մեծ ուրախութիւնը որ մարդիկ կ'ապրին երբ իրենց համարյարգի իր մը կամ սիրելի անձ մը վերագտնեն: Տէր Յիսուս կը սորվեցնէ՝ որ նոյնպէս մեծ ուրախութիւն կը տարածուի ամբողջ երկնաւոր արքայութեան մէջ, երբ մեր երկնաւոր Հայրը վերագտնէ նոյնիսկ մէկ, միայն մէկ, հեռացած կամ մեղաւոր հոգի մը:

Մարտ 2-ին, Շաբաթ օր կը տօնենք Յովհաննէս Երուսաղէմի հայրապետին (ծն. շ. 356-մի. 417), Յովհաննէս Օձնեցի (մի. 728) Կաթողիկոսին, Յովհաննէս Որոտնեցիի (1315-1386) եւ իր աշակերտ Գրիգոր Տաթեւացիի (1346-1409) յիշատակը:

Յովհաննէս Օձնեցի կաթողիկոս կ'ընտրուի 718-ին եւ երեք տարի յետոյ կը հրաւիրէ Դուինի ժողովը եկեղեցական բարեկարգութիւնը ապահովելու համար: Իրեն կը պարտինք Հայ Եկեղեցւոյ կանոնագիրքը հաւաքելու աշխատանքը, ինչպէս նաեւ "Գիրք Թղթոց" անունով մեզի հասած դաւանաբանական նամակներու հաւաքածոն:

Յովհաննէս Որոտնեցին իր ուսումը ստացած է Գլաճորի Վանքին մէջ, որ այդ տարիներուն ուսումնական ականաւոր կեդրոն մըն էր Վայոց Ձորին մէջ (Սիւնիք), եւ ապա հաստատուած է Տաթեւի վանքը եւ եղած անոր Վարդապետարանին գլուխը: Իր աշակերտներէն է մեծանուն Գրիգոր Տաթեւացին, որ եղաւ արժանաւոր յաջորդը իր վարդապետին թէ՛ բազմահմուտ գիտութեամբ եւ թէ՛ մանաւանդ սրբակենցաղ վարքով: